ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2019 թվականի N124-Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման 8-րդ հավելվածի «Կապանի տարածաշրջան» բաժնի 9-րդ կետի պահանջը՝

որոշում եմ.

1. «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նախկին հիվանդանոցի մասնաշենքերը՝ թվով 6 հատ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Նարեկ Դավթյան	-	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (նախագահ),
Արմեն Թադևոսյան	-	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ,
Արփինե Դավթյան	-	մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ,
Արմեն Ղահրամանյան	-	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն,
Ջիվան Նավասարդյան	-	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հաշվապահ:

2. Հանձնաժողովին՝ մինչև ս/թ դեկտեմբերի 28-ը ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

12/17/2019

X

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Подписано: BABAYAN NAREK 1505920434

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ /Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 17
ք. Կապան